ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ն ստեղծվել է 2019թ.: 2019թ. սեպտեմբերի 26-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն՝ ստանալով հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման, իր կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0018 լիցենզիան:

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի ղեկավար մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը և գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Գևորգ Նալբանդյանը:

Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ: Ընկերությունն ունի երկու բաժնետեր, որոնք ներկայացված են ստորև.

Մասնակցի անունը, ազգանունը	Ունեցած մասնակցության	Մասնակցության չափը
Գևորգ Նալբանդյան	37 500 000	50.00%
Լարիսա Նալբանդյան	37 500 000	50.00%

Համաձայն ՀՀ ԿԲ-ի կողմից 26.09.2019թ-ին տրամադրած թիվ 0018 լիցենզիայի Ընկերությունն իրականացնում է հետևյալ ներդրումային ծառայությունները՝

- Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում
- Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:

Ընկերության իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ., ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1 շենք, 2/1:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է 3 մարդ:

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

Բ) Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Գ) Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով: Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Դ) Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

Ե) Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

ա) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱՇԿՎ),

բ) «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱԱՀՖԱ),

գ) Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական

հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և

- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

- Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասուրդի (պայմանագրի համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հւսքերի միջև տարբերություններ, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ

- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ

- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք: Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝

- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ

այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ՃԱՆԱՉՈՒՄԸ և ՍԿԶԲՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ գործարքի հետ կապված ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

2. ՀԵՏԱԳԱ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

3. ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը

կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

- Համակարգչային տեխնիկա ՝ 1-3 տարի
- Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ՝ 8 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

- **Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

- Համակարգչային հաշվապահական ծրագիր և այլ ոչ նյութական ակտիվներ՝ 5 տարի:

Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը, արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող օգուտները (կորուստները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ որպես

«իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ներդրումների առքուվաճառքից զուտ եկամուտ:

ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված

արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում

են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ տոկոսային ծախսերի կազմում:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Արտարժույթի առուվաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առուվաճառքի գործառնություններից ստացված զուտ շահույթը (վնասը) ներկայացվում է որպես առևտրային գործունեությունից զուտ շահույթի կամ վնասի կազմում:

Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից (եկամուտից) և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումները: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխությունների արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

(հազար դրամ)

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից		
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	9,827	8,911
Տոկոսային եկամուտներ տրամադրված փոխառություններից		
Ընդամենը	**9,827**	**8,911**

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց		
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(35)	(87)
Տոկոսային ծախսեր ֆին. վարձակալության գծով IFRS 16	(39)	(101)
Այլ տոկոսային ծախսեր	(2,107)	(1,892)
Ընդամենը	**(2,181)**	**(2,080)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**7,646**	**6,831**

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

(հազար դրամ)

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	2022թ.	2021թ.
Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից		
Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից	106	29
Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից		
Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից		
Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից		
Պահառության գործունեությունից		
Ընդամենը	106	29

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	2022թ.	2021թ.
Միջնորդավճարների գծով ծախս	(5)	
Ընդամենը	(5)	-
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	101	29

Ծանոթագրություն 5. Եկամուտ շահաբաժիններից

(հազար դրամ)

Շահաբաժիններ	2022թ.	2021թ.
Սովորական բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ		
Ընդամենը		

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

(հազար դրամ)

Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից	2022թ.	2021թ.
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»		
ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ		
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
Ընդամենը		

Արտարժութային գործառնություններից	2022թ.	2021թ.
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ		
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ		
Ընդամենը		
Ընդամենը զուտ եկամուտ (ծախս) առևտրային գործառնություններից		

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

(հազար դրամ)

Այլ գործառնական եկամուտ	2022թ.	2021թ.
Ֆինանսական հաշտարարի գրասենյակից վերադարձրած գումար	17	9
Ընդամենը	**17**	**9**

Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

(հազար դրամ)

Ներդրումների գծով	2022թ.	2021թ.
Պահուստի սկզբնական մնացորդ		
Պահուստին կատարված մասհանումներ		
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
Պահուստի օգտագործում		
Պահուստի վերջնական մնացորդ		

Այլ ակտիվների գծով	2022թ.	2021թ.
Պահուստի սկզբնական մնացորդ		
Պահուստին կատարված մասհանումներ		
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
Պահուստի օգտագործում		
Պահուստի վերջնական մնացորդ		

Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր

(հազար դրամ)

Ընդհանուր վարչական ծախսեր	2022թ.	2021թ.
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	3,499	2,486
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	2,179	2,200
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	642	546
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	251	224
Վարձակալած տարածքի մաշվածության գծով ծախսեր	675	675
Ներդրումային ընկերության շենքերի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	120	120
Ներկայացուցչական ծախսեր	79	75
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	624	590
Այլ վարչական ծախսեր	438	633
Ընդամենը	**8,507**	**7,549**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների թիվը եղել է 3, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 89,5 հազար դրամ:

Ընկերությունը գործունեությունը իրականացնում է վարձակալությամբ ստացված տարածքում, որի ամսական գումարը կազմում է 66.7 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր

(հազար դրամ)

Այլ գործառնական ծախսեր	2022թ.	2021թ.
Հասարակական կապերի գծով ծախսեր		
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր		
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր		
Ընդամենը		

Ծանոթագրություն 11. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս) Ընկերությունը չի ունեցել:

Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)

(հազար դրամ)

Շահութահարկի գծով ծախս	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)		
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	1,545	
Ընդամենը	**1,545**	-

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ %
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	(743)	(680)	
Շահութահարկ՝ դրույքաչափով	-	-	
Չհարկվող եկամուտներ			
Շահութահարկի դրույքաչափի փոփոխման ազդեցություն			
Չնվազեցվող ծախսեր			
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	-	-	

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.2021թ.	2022թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.12.2022 թ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝			
Հիմնական միջոցների գծով			
Այլ ակտիվների գծով			
Ստեղծված պահուստների գծով			
Օգտագործման իրավունքով ստացված հիմնական միջոցների գծով			
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝			

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների գծով			
Դեբիտորական պարտքերի գծով			
Հիմնական միջոցների գծով			
Այլ պարտավորությունների գծով	-	(1,545)	(1,545)
Այլ ակտիվների գծով			
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	-	(1,545)	(1,545)
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս			
Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի (պարտավորության) շարժը	-	(1,545)	(1,545)

Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

Ծանոթագրություն 13-ում բացահայտված է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը:

(հազար դրամ)

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	2022թ.	2021թ.
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ		
(վնաս) հարկումից հետո		
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով		
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին		
Վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)		
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ		

Ծանոթագրություն 14. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

14.1. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

(հազար դրամ)

	2022թ.	2021թ.
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում		

14.2. Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը

(հազար դրամ)

	2022թ.	2021թ.
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում		
Ընդամենը		

Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)

Ընթացիկ հաշիվներ	2022թ.	2021թ.
ՀՀ բանկերում ընթացիկ հաշիվներ	389	15,792
Ընդամենը	**389**	**15,792**
Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ		
Ռեպո (հետգնման համաձայնագիր)		
Հաշվեգրած տոկոսներ		
Ընդամենը		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-
Ընդամենը դրամական միջոցներ	**389**	**15,792**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը 31.12.2022 թվականի վերջում կազմել է 389 (2021-ին՝ 15,792 հազար դրամ է, որից 15,000 հազար դրամը կապիտալի համալրման համար էր) հազար դրամ:

Ծանոթագրություն 16. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

(հազար դրամ)

Պահանջներ հաճախորդների նկատմամբ	2022թ.	2021թ.
Վարկեր և տրամադրված փոխառություններ, այդ թվում՝		
ռեպո (հետգնման) համաձայնագրեր		
Այլ		
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը պահանջներ		
Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ		
Ընդամենը զուտ պահանջներ		

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց և խնդրահարույց վարկեր և տրամադրած փոխառություններ չի ունեցել:
Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Ծանոթագրություն 17 Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» Ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)

Պետական արժեթղթեր	2022թ.	2021թ.
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
գանձապետական պարտատոմսեր		
Ընդամենը պետական արժեթղթեր		
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված		
ՀՀ ոչ պետական արժեթղթեր		
	2022թ. Ցուցակված	2021թ. Ցուցակված
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի		
երկարաժամկետ պարտքային գործիքներ		
կապիտալի գործիքներ		
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր		
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված		
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Ֆորվարդ		
Ընդամենը		
Ընդամենը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող»		
ֆինանսական ակտիվներ		

Ծանոթագրություն 18. «Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» Ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)

Պետական արժեթղթեր	2022թ.	2021թ.
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
գանձապետական պարտատոմսեր	92,879	87,498
Ընդամենը պետական արժեթղթեր	**92,879**	**87,498**
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված		
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	2022թ. Ցուցակված	2021թ. Ցուցակված
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի		
երկարաժամկետ պարտքային գործիքներ		
կապիտալի գործիքներ		
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր		
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված		
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Ֆորվարդ		
Ընդամենը	-	-
Ընդամենը «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	**92,879**	**87,498**

Ծանոթագրություն 19. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)

Պետական արժեթղթեր	2022թ.	2021թ.
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝		
գանձապետական պարտատոմսեր		
Ընդամենը պետական արժեթղթեր		
Հաշվեգրած տոկոսներ		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված		
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ) (ծանոթագրություն 8)		
Զուտ ներդրումներ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում		

Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Ընկերությունն այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չունի:

Ծանոթագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Երկարաժամկետ օգտագործման իրավունքով ընկերությանը պատկանող հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը 01.01.2021թ.			**2,082**	**2,082**
Ավելացում				-
Մնացորդը 31.12.2021թ.			**2,082**	**2,082**
Ավելացում			2,066	2,066
Մնացորդը 31.12.2022թ.			**4,148**	**4,148**
Կուտակված մաշվածություն				
Մնացորդը 01.01.2021թ.			**788**	**788**
Ավելացում			675	675
Մնացորդը 31.12.2021թ.			**1,463**	**1,463**
Ավելացում			675	675
Մնացորդը 31.12.2022թ.			**2,138**	**2,138**
Զուտ հաշվեկշռային արժեք				
առ 31.12.2021թ.			**619**	**619**
առ 31.12.2022թ.			**2,010**	**2,010**

Ընկերությունը 31.12.2022 թվականի դրությամբ հիմնական միջոցներ չի ունեցել:

Ծանոթագրություն 22. Հետաձգված հարկային ակտիվներ

Տես ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 23. Այլ ակտիվներ

(հազար դրամ)

Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	2022թ.	2021թ.
Դեբիտորական պարքեր բյուջեի գծով (շահութահարկի կանխավճար)		
Կանխավճար մատակարարներին	77	-
Կանխավճարներ բյուջեի գծով		
Տրամադրված փոխառություններ		
Տրամադրված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ		
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ		
Ընդամենը		
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)		
Այլ ակտիվներ		
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր		
Այլ ակտիվներ		
Ընդամենը	**77**	-

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

(հազար դրամ)

Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ	2022թ.	2021թ.
ՀՀ բանկեր		
Ռեպո համաձայնագրեր		
Հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը		

Ծանոթագրություն 25. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ

(հազար դրամ)

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	2022թ.	2021թ.
Ներգրավված փոխառություններ հիմնադրից	29,628	33,985
Հաշվեգրված տոկոսներ	190	165
Ընդամենը	**29,818**	**34,150**

Ծանոթագրություն 26. «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություններ

(հազար դրամ)

«Իրական արժեքով չափվող» շահույթի կամ վնասի միջոցով ֆինանսական պարտավորություններ	2022թ.	2021թ.
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ածանցյալ գործիքներ՝		
Ֆորվարդ		
Ընդամենը		

Ծանոթագրություն 27. Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի:

Ծանոթագրություն 28. Հետաձգված հարկային պարտավորություններ

Տե՛ս ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 29. Պահուստներ

(հազար դրամ)

Պահուստներ	2022թ.	2021թ.
Սկզբնական մնացորդ	**371**	**167**
Պահուստին կատարված մասհանումներ	276	280
Պահուստի օգտագործում	-121	-76
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		
Վերջնական մնացորդ	**526**	**371**
Արձակուրդայինի գծով	**526**	**371**
Աուդիտի գծով		

Պահուստների գծով Ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրա արդյունքում դրամական արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և աուդիտի ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը՝ պահուստների գումարը որոշվել է առանց զեղչման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 30.

(հազար դրամ)

	2022թ.	2021թ.
Վարձակալության գծով պարտավորություններ	**2,173**	**669**
Ընդամենը	**2,173**	**669**

Այլ պարտավորություններ

(հազար դրամ)

Այլ պարտավորություններ	2022թ.	2021թ.
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝	**131**	**61**
Շահութահարկի գծով	6	
Փոխանցված կանխավճար շահութահարկի գծով		
Եկամտային հարկի գծով		**61**
Այլ հարկերի ու տուրքերի գծով	125	
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ		
Պարտավորություններ աշխատակիցների պարտադիր կենսաթոշակայինի և դրոշմանիշային վճարների գծով	12	**8**
Պարտավորություններ մատակարարների նկատմամբ	112	**35**
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ		
Այլ պարտավորություններ	157	**5**
Ընդամենը	**412**	**109**

Ծանոթագրություն31.Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 75,000 հազար դրամ է, որը բաժանված է 100,000 (հարյուր հազար) անվանական արժեքով 750 (յոթ հարյուր հիսուն) բաժնեմասերից: Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է և դրա բաժնեմասերը պատկանում են ընկերության մասնակիցներին:

Ծանոթագրություն 32. Կապիտալի այլ տարրեր

(հազար դրամ)

Կապիտալի այլ տարրեր	2022թ.	2021թ.
Անտոկոս փոխառություններ հիմնադիրներից	7,067	
Ընդամենը	**7,067**	-

Ծանոթագրություն 33. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու եռամսյակում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.
(հազար դրամ)

	Հաշվետու տարի		Նախորդ տարի	
	Գործարքի	Չմարված	Գործարքի	Չմարված
Հազար դրամ	գումար	մնացորդ	գումար	մնացորդ
Տարածքի վարձակալություն	1,504	2,173		669
Փոխառության տրամադրում	(4,333)	29,817	4,165	34,150

Ծանոթագրություն 34. Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ

34.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով Ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ:

- **Պարտքային ռիսկի վերլուծություն**

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցների մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	389		389
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	92,879		92,879
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
Այլ ակտիվներ	2,087		2,087
Ընդամենը ակտիվներ	**95,355**	-	**95,355**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
Պարտավորություն ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ	29,817		29,817
Այլ պարտավորություններ	3,111		3,111
Ընդամենը պարտավորություններ	**32,928**	-	**32,928**
Զուտ դիրք	**62,427**	-	**62,427**

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցների մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	15,792		15,792
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	87,497		87,497
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			-
Այլ ակտիվներ	619		619
Ընդամենը ակտիվներ	**103,908**	**-**	**103,908**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
Պարտավորություն ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ	34,150		34,150
Այլ պարտավորություններ	1,149		1,149
Ընդամենը պարտավորություններ	**35,299**	**-**	**35,299**
Զուտ դիրք	**68,609**	**-**	**68,609**

34.2 Շուկայական ռիսկ

- **Շուկայական ռիսկի վերլուծություն**

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ Ընկերությունը կկրի վնասներ: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է առավելագույնս նվազագույնի հասցնել անորոշության դաշտը, որը հնարավորություն կտա կրճատել ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկայնության տվյալ մակարդակի հիմնավորվածությունը:

34.3 Արտարժույթի ռիսկ

Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	<< դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ << ԿԲ-ում			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ			
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
Այլ			
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
Այլ պարտավորություններ			
Ընդամենը պարտավորություններ			
Զուտ դիրք			

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	<< դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ << ԿԲ-ում			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ			
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			
Այլ			
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			
Այլ պարտավորություններ			
Ընդամենը պարտավորություններ			
Զուտ դիրք			

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ արտարժութային ածանցյալ գործիքներ առկա չեն:

34.4. Տոկոսադրույքի ռիսկ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3ամիս		3-ից մինչև 6ամիս		6 ամսից մինչև 1 տարի		1-ից մինչև 5տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	դրամով	իսելիպքմտոմ	դրամով	իսելիպքմտոմ	դրամով	իսելիպքմտոմ	դրամով	իսելիպքմտոմ	դրամով	իսելիպքմտոմ	դրամով	իսելիպքմտոմ
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ												
-ավանդներ												
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող»												
- երկարաժամկետ պարտք. գործիքներ											92,879	
-կարճաժամկետ պարտք. գործիքներ												
ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր												
Այլ ակտիվներ	466								2,010			
Ընդամենը	466				-		-		2,010		92,879	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
- վարկեր												
-ռեպո համաձայնագրեր												
-այլ	(2,483)						(746)		(38,311)			
Ընդամենը	(2,483)				-		(746)		(38,311)		-	
Զուտ դիրք	(2,017)				-		(746)		(36,301)		92,879	

«ՋԻ&ԷՖ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3ամիս		3-ից մինչև 6ամիս		6 ամսից մինչև 1 տարի		1-ից մինչև 5տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	դրամով	հաշվարկումով	դրամով	հաշվարկումով	դրամով	հաշվարկումով	դրամով	հաշվարկումով	դրամով	հաշվարկումով	դրամով	հաշվարկումով
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
-ավանդներ												
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝												
- երկարաժամկետ պարտք. գործիքներ												
-կարճաժամկետ պարտք. գործիքներ											87,498	
ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր												
Այլ ակտիվներ	15,792								619			
Ընդամենը	15,792				-		-		619		87,498	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
- վարկեր												
-ռեպո համաձայնագրեր												
-այլ	(209)						(746)		(34,344)			
Ընդամենը	(209)				-		(746)		(34,344)		-	
Զուտ դիրք	15,583	-	-	-	-	-	(746)	-	(33,725)	-	87,498	-

- **Տոկոսային գործիքների միջին տոկոսադրույքը**

Հոդվածի անվանումը	Հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%
Ակտիվներ		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝		
-ավանդներ		
-հակադարձ հետգնման համաձայնագրեր		
-հաճախորդների նկատմամբ պահանջներ		
-այլ		
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» և «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	9 ,5991%	
Ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր		
Պարտավորություններ		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. Նկատմամբ		
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		

34.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

34.6. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ:

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	389						389
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. Նկատմամբ							
Հաճախորդների նկատմամբ պահանջներ							
Արժեթղթեր, այդ թվում՝							
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող »					92,879		92,879
Ամորտիզացված արժեքով չափվող					-		
Այլ պահանջներ	-		-		2,087		2,087
Պայմանագրային պահանջներ**	-		-	-	-		
Ընդամենը	389				94,966		95,355

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ							-
Այլ պարտավորություններ		938		746			1,684
Պայմանագրային պարտավորություններ***					31,244		31,244
Ընդամենը		938	-	746	31,244	-	32,928

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	792					15,000	15,792
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. Նկատմամբ							-
Հաճախորդների նկատմամբ պահանջներ							-
Արժեթղթեր, այդ թվում՝							
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող »					87,498		87,498
Ամորտիզացված արժեքով չափվող					-		
Այլ պահանջներ	-		-		619		619
Պայմանագրային պահանջներ**	-		-	-	-		-
Ընդամենը	792				88,117	15,000	103,909

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ							-
Այլ պարտավորություններ		209		746			955
							-
Պայմանագրային պարտավորություններ***					34,344		34,344
Ընդամենը		209		746	34,344		35,299

Պայմանագրային պահանջներ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները) ՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Պայմանագրային պարտավորություններ տողում լրացված են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները) ՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Ծանոթագրություն 35. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

(հազար դրամ)

	2022թ.	2021թ.
Կանոնադրական կապիտալ	75,000	75,000
Գլխավոր պահուստ		
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)	(743)	(680)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	(19,180)	(5,129)
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	(1,262)	(582)
Հայտարարված շահաբաժիններ		
Կապիտալի այլ տարրեր	7,067	
Ընդամենը	60,882	68,609

Ծանոթագրություն 36. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական գործիքներն արտացոլված
են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ:

Ծանոթագրություն 37. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

31.12.2022 թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

Ծանոթագրություն 38. Ապաճանաչում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրա մի մասի ապաճանաչման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

Ծանոթագրություն 39. Գրավադրված ակտիվներ

31.12.2022 թ. դրությամբ Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 40. Ընդունված գրավ

Ընկերությունը 31.12.2022 թ դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 41. Պարտավորությունների չկատարում/խախտում

31.12.2022 թ. դրությամբ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:

Ընկերության առանցքային անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են աշխատավարձի գծով ծախսումներում.

հազար դրամ	01.01.2022 -31.12.2022
Աշխատավարձ և պարգևավճար	2 513

- **«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ղեկավարության հայտարարությունը**

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակն արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվություններն Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
- Ընկերությունում գործում է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,
- Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Հավաստիացնում ենք նաև, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

«ՋԻ&ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝ **Գևորգ Նալբանդյան**

Գլխավոր հաշվապահ՝
«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ **Ալբերտ Ասատրյանի**